2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի անգլերեն լեզվի ուսուցիչ՝ Գրետա Նազարյանի կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն

Ուսուցիչ՝ **Գ. Նազարյան**

1. Մասնակցել եմ <<Ինտերակտիվ կրթության զարգացում>> հիմնադրամի կողմից հանրակրթական ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման վերապատրաստման դասընթացին:

2. 2022-2023 ուստարվա համար մեթոդմիավորման կողմից քննարկվել և հաստատվել է օտար լեզվի առարկայի թեմատիկ պլանը, որը կազմված է ԿԳՄՍ- ի կողմից հաստատված առարկայական ծրագրերի և չափորաշիչների հիման վրա: Տնօրենությանը ամեն օր ներկայացվել է դասի պլանների արձանագրությունները և հաստատվել է:

3. Մասնակցել եմ մեթոդմիավորման կողմից կազմակերպված նիստերին, որոնց ներկայացել եմ զեկույցներով:

4. Կատարել եմ դասալսումներ:

5. Դասերին հաճախակի օգտագործել եմ դիդակտիկ նյութեր , պաստառներ՝ դասանյութը ավելի մատչելի և հետաքրքիր դարձնելու համար:

6. Դասարանների խմբերում հաճախակի տեղադրվել են առցանց հղումներ ծրագրային նյութերի վերաբերյալ և կատարվել են շատ համակարգչային դասեր անգլերենի նկատմամբ սեր և հետաքրքրություն սերմանելու համար:

7. Աշխատանք է տարվել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ:

8. Կազմվել են թեմատիկ գրավոր աշխատանքների թեստեր 1-ին և 2-րդ կիսամյակի համար, որոնցում առկա էր եղել եռամակարդակ մոտեցումը:

9. Բոլոր աշխատանքները ստուգվել և արխիվացվել են:

10. Կազմակերպել եմ տեսադասեր “The Lion and the Mouse”, “The Ugly Duckling”, “Snow White and Rose Red”, "The Greedy Hippo", "The Lazy Bear" թեմաներով:

11. Աշակերտների հետ տարվել են աշխատանքներ անգլերենի օլիմպիադայի դպրոցական փուլին մասնակցելու համար:

12. Հետևել եմ տնային հանձնարարությունների կատարմանը: Պարբերաբար հավաքել և ստուգել եմ աշխատանքային տետրերը:

13. Մասնակցել եմ <<BELCAST>> ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինարի՝ ՏՀՏ գործիքների կիրառման վերաբերյալ:

14. 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի քննություն:

15. Մասնակցել եմ <<Հետազոտենք և բազահայտենք աշխարհը>> խորագրով աշակերտական աշխատաժողովին:

16. 7-րդ <<ա >> դասարանում որակը 50%-ից ցածր է,քանի որ թույլ դասարան է և կան ԿԱՊԿՈՒ աշակերտներ: 5-րդ <<բ>> դասարանում որակը 2%-ով նվազել է , քանի որ դասարանը համալրվել է 1 ցածր առաջադիմություն ունեցող աշակերտով: Որակը բարձրացնելու նպատակով հավելյալ հանձնարարություններ են տրվել ետ մնացող աշակերտներին: